Z/ 0-3/ 4/ 2022

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-01
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» «01» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, մի կողմից, և «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ն (այսուհետ՝ կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ա. Չուլյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 2073-Ա/2 հրամանը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը պարտավորվում է պայմանագրով սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել հրատարակման աշխատանքներ՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. աշխատանքների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ N 1 հավելված,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ N 2 հավելված,

1.1.3. ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ N 3 հավելված:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1124. Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի» «11002. Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառման համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. 1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ կատարողից ընդունել պատշաճ կատարված աշխատանքները և հաշվետվությունները:

2.1.2. Իր և կատարողի՝ կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակում կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպչական օգնություն:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և կատարողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի):

2.2.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկույթ սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.3. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել կատարողի կողմից ոչ պատշաճ կատարվող աշխատանքները:

2.2.4. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ կատարված աշխատանքները:

2.2.5. Վերահսկել սույն պայմանագրով կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.6. Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ժամանակին, պատշաճ կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքները, դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

2.3.2. Հանձնել պայմանագրով նախատեսված աշխատանքները պատվիրատուին՝ պայմանագրով սահմանված ժամկետում:

2.3.3. Պահպանել սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների ծավալը:

2.3.4. Աշխատանքը հրատարակելիս կամ նրա մասին ԶԼՄ-ներում արտահայտվելիս նշել՝ «Իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ»:

2.3.5. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պատվիրատուի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան:

2.3.6. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.7. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար:

2.3.8. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կատարողի մոտ): Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Որպես բովանդակային հաշվետվություն՝ ներկայացնել աշխատանքները էլեկտրոնային կրիչներով, իսկ հրատարակելուց հետո ներկայացնել գրքերից մեկական օրինակ:

2.3.9. Պատվիրատուին ներկայացնել ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն հավելված N 3-ի:

2.3.10. Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները:

2.3.11. Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2.3.12. Արտերկրի հրատարակչությունների հետ կնքվելիք պայմանագրերում սահմանել, որ վերջինները պարտավոր են գրքերը հրատարակելուց հետո 20 օրինակ ուղարկել «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին:

2.3.13. Արտերկրի հրատարակիչների («Հայ գրականությունը թարգմանություններում» ուղղություն) հետ կնքվող պայմանագրերում ամրագրել, որ վերջիններս պարտավոր են աշխա-

տանքը հրատարակել մինչև 2023 թվականի նոյեմբերի 15-ը, իսկ հաշվետվությունները ներկայացնել մինչև 2023 թվականի նոյեմբերի 25-ը:

2.3.14. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների մակետները (խմբագրված և սըրբագրված) էլեկտրոնային կրիչ(ներ)ով Պատվիրատուին ներկայացնել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 1-ը՝ մակետների հաշվետվությունները ներկայացնելով մինչև 2022 թվականի դեկտեմբերի 10-ը: Աշխատանքները հրատարակել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ը՝ հրատարակությունների հաշվետվությունները ներկայացնելով մինչև 2023 թվականի դեկտեմբերի 10-ը:

2.3.15. Ստեղծագործողների և հետազոտողների հետ կնքել «Գույքային իրավունքի օգտագործման պայմանագրեր»՝ այդ պայմանագրերում ընդգծելով, որ գույքային իրավունքը՝ համաձայն Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է:

2.3.16. Ստեղծագործողների և հետազոտողների հետ կնքվող «Գույքային իրավունքի օգտագործման պայմանագրերում» ամրագրել, որ վերջիններս պարտավոր են աշխատանքը հրատարակել մինչև 2023 թվականի նոյեմբերի 15-ը:

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները:

2.4.2. Պատվիրատուից պահանջել վերացնել կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները:

2.4.3. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդհանուր արժեքը սահմանված է մինչև **31551.7** հազար (երեսունմեկ միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար յոթ հարյուր) դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները, որից՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների ծախսը սահմանված է՝ 26293.1 հազ. դրամ, իսկ ԱԱՀ-ի գումարը՝ 5258.6 հազ. դրամ:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի 80 %-ը պատվիրատուն պետք է կատարողին վճարի սույն պայմանագրի 2-րդ հավելվածով սահմանված ժամկետներում, կատարողի՝ սույն պայմանագրում նշված հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով, իսկ 20%-ը պայմանագրի 2.3.14-րդ կետով նախատեսված մակետները ընդունելուց հետո:

3.3. Կատարողի կողմից աշխատանքների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պատվիրատուն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված /չստացված/ եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը՝ կողմերից որևէ մեկի համար դրա հետագա կատարման անհնարինության հիմքով կամ այլ պատճառաբանությամբ, չի թույլատրվում:

6.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետները կատարողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, եթե պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տույժ պայմանագրի տվյալ ժամանակահատվածի համար սահմանված գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) %-ի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կատարողը, եթե պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարված աշխատանքի 0.5 (հինգ տասնորդական) %-ի չափով:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8.2. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.5. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:

8.6. Սույն պայմանագիրը կազմված է 12 թերթից (ներառյալ հավելվածները), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն 2	ք. Երևան, Տերյան 72
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032753	ՀՀ 900018001538
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 01506092
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Հեռ.՝ 060 62 35 13
---------- Վ. Գասպարյան	Տնօրեն՝
Կ.Տ.	---------- Ա. Չուլյան
	Կ.Տ.

Հավելված N 1
« 20 » « 01 » 2022 թ.
N ՄՇԴ 01 պայմանագրի

Աշխատանքների կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներ

Հ/Հ	Թարգմանական, հետազոտական և ստեղծագործական աշխատանքի հեղինակը	Թեման կամ վերնագիրը	Ծավալը (էջ)	Գումարը (հազար դրամ)
Ստեղծագործական աշխատանքներ				
1	Արտեմ Հարությունյան	«Հայոց հողի ծածկագիր տեսիլքներ» (բանաստեղծություններ)	300	810.0
2	Աննա Դավթյան	«Պատմվածքների ժողովածու»	120	758.3
3	Գուրգեն Խանջյան	«Ելումուտ-պատերազմ» (վեպ)	110	900.0
4	Սուսաննա Հարությունյան	«Անտառի մեղավոր անցյալը» (պատմվածքներ, վիպակներ)	110	650.0
5	Հովհաննես Երանյան	«Մազապրուծ Արչիները» (վեպ)	160	650.0
6	Գևորգ Տեր-Գաբրիելյան	«Թալինթ Պֆեստ» (վեպ)	200	633.3
7	Գարիկ Հովհաննիսյան	«Կաղ Վկա» (վեպ)	200	612.5
8	Դիանա Համբարձումյան	«Մեղր ու լեղի աշխարհ» (վեպ)	200	530.0
9	Հովհաննես Հովակիմյան	«Մենք՝ Արմեններս» (վեպ)	170	580.0
10	Գևորգ Սահակյան	«Ալ մոնումենտ կամ մեծ մութը» (վեպ)	160	530.0
11	Հայկ Հարությունյան	«Վիկտոր Համբարձումյան» (վեպ)	250	650.0
Հետազոտական աշխատանքներ				
12	Լիլիթ Սիմոնյան	«Գարնանային տոներ» («Տոմարային ծիսաշար», հատոր երրորդ)	700	616.7
13	Դավիթ Մոսինյան	«Նիկողոս Սարաֆեանը՝ արձակագիր»	150	580.0
14	Աելիտա Դոլուխանյան	«Վարք մեծաց. Նիկողայոս	110	630.0

		Ադոնց»		
Թարգմանական աշխատանքներ				
15	Արամ Թոփչյան	Վերգիլիուս. «Բուկոլիկներ» (Հովվականք) և «Գեորգիկներ» (Մշակականք), *(լատիներենից)*	300	1000.0
16	Քնարիկ Քյուրքչյան	Ֆրանսուա Ռընե դը Շատոբրիան. «Անդրշիրմյան հուշագրություններ» *(ֆրանսերենից)*	250	830.0
17	Վարդան Ֆերեշեթյան	Լորենս Սթերն. «Ջենթլմեն Թրիստրամ Շենդիի կյանքն ու հայացքները» *(անգլերենից)*	500	816.7
18	Սոնա Հայրապետյան, Անի Աբգարյան, Դիանա Հովհաննիսյան, Դիանա Տեր-Զաքարյան	Լի Ռուճըն. «Ծաղիկները հայելու մեջ» *(չինարենից)*	700	910.0
19	Հասմիկ Ամիրաղյան	Դոն Խուան Մանուել. «Կոմս Լուկանոր» *(իսպաներենից)*	145	520.0
20	Աշոտ Ալեքսանյան	Ռոբերտ Մուզիլ. «Մարդն առանց հատկությունների», գիրք 2-ի մաս 3 և 4 *(գերմաներենից)*	500	800.0
21	Գրիգոր Ջանիկյան	Լեոն Բլուա. «Երկեր» *(ֆրանսերենից)*	200	666.7
22	Բագրատ Ավետիսյան	Գաբրիելե դ'Աննունցիո. «Անմեղը» *(իտալերենից)*	220	520.0
23	Օլգա Վարդազարյան	Կլավդիոս Էլիանոս. «Զանազան պատմություններ» *(հունարենից)*	220	720.0
24	Արմեն Ղազարյան	Նիկոլայ Լեսկով. «Վիպակներ և պատմվածքներ» *(ռուսերենից)*	200	508.3
Հայ գրականությունը թարգմանություններում				
25	Ալեքսանդր Թոփչյան	«Բանկ Օտոման» *(մակեդոներեն)*	170	1248.3
26	Սլավի-Ավիկ Հարությունյան	«Խաղաղ օրեր» *(կատալաներեն)*	199	677.5
27	Մկրտիչ Սարգսյան	«Քաջ Նազար» *(սերբերեն)*	250	1412.5
28	Գրիգոր Շաշիկյան	«Հիսուսի կատուն»	142	920.0

		(մակեդոներեն)		
29	Գրիգոր Շաշիկյան	«Հիսուսի կատուն» *(ռումիներեն)*	142	404.2
30	Գուրգեն Խանջյան	«Ենոքի աչքը» *(ռումիներեն)*	316	713.3
31	Հովիկ Աֆյան	«Կարմիր» *(ռումիներեն)*	120	372.3
32	Գուրգեն Մահարի	«Այրվող այգեստաններ» *(ռումիներեն)*	472	1185.8
33	Նիկոլ Փաշինյան	«Երկրի հակառակ կողմը» *(ալբաներեն)*	256	1695.0
34	Սուսաննա Հարությունյան	«Ագռավները Նոյից առաջ» *(արաբերեն)*	138	1241.7
Ընդամենը՝ առանց ԱԱՀ-ի				**26293.1**
ԱԱՀ*				**5258.6**
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ներառյալ ԱԱՀ-ն				**31551.7**

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032753
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

---------- Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 72
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001538
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 62 35 13

Տնօրեն՝

---------- Ա. Չուլյան

Կ.Տ.

Հավելված N 2

« 20 » « 01 » 20221 թ.

N ՄՇԴ 01 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝		«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ			
Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝					
Ծրագիր 1124	Միջոցառում 11002	«11002. Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին»			
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ եռամսյակների (աճողական)			
		I եռամսյակ	**I կիսամյակ**	**9 ամիս**	**տարի**
1	2	3	4	5	6
Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	4637	**7,887.9**	**15,775.8**	**23,663.8**	**31,551.7**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032753
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

---------- Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 72
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001538
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 62 35 13
Տնօրեն՝

---------- Ա. Չուլյան

Կ.Տ.

Հավելված N 3

« 20 » « 01 » 2022 թ.

N ՄՇԴ 01 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (-/)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակա-հատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերու-թյունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբե-րության պարզա-բանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032753
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Տերյան 72
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001538
ՀՎՀՀ 01506092
Հեռ.՝ 060 62 35 13

Տնօրեն՝

_____ Ա. Չուլյան

Կ.Տ.